ԱՂԹԱՄԱՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԻՃԱԿՆԵՐԸ՝ ԶԻՆԱԲԱԽՈՒՄՆԵՐԻ ԹԱՏԵՐԱԲԵՄ (1470–1560-ական թվականներ)

ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆ

1470-ական թվականներին Աղթամարի կաթողիկոսությանը ենթակա եկեղեցական վիճակների (թեմերի) բնակչությունը Աղ-կոյունլուների թուրքմենական ցեղախմբի գերիշխանության ոլորտում էր: Գրիչներն իրենց թողած հիշատակարաններում ուշագրավ ու արժանահավատ տեղեկություններ են հաղորդում Աղթամարի աթոռին ենթակա եկեղեցաթեմերում ստեղծված կացության մասին: Աղ-կոյունլու փադիշահ Ուզուն Հասանի (1453–1477) գահակալության տարիները բնորոշվում են իբրև դառնաղետ ժամանակաշրջան: Ըստ 1471 թ. Աղթամարի Ս. Խաչ վանքում օրինակված Ճաշոցում եղած հիշատակագրության՝ «…երկիր ամենայն երերեալ կայ և տատանեալ ի ձեռաց անօրինաց… է զմահ և զսով, զսուր և զգերութիւն»[1]: 1474 թ. Խլաթի գավառակի Ծղակ գյուղի մոտակայքի վանքում արտագրված Ավետարանի գրիչը վկայում է, որ նույն թվականին Ուզուն Հասանը հարձակվում է Բաղեշի վրա «…և բազում ի մարաց[2] ազգէն կոտորեաց. և Հայոց ազգիս յոյժ ողորմած է, զի գերի ոչ առնէ…»[3]: Այդ փադիշահը ջանում էր սիրաշահել քրիստոնյաներին և ձեռք բերել Վենետիկի հանրապետության զորակցությունն ընդդեմ Օսմանյան սուլթանության: Վենետիկ ուղարկած նրա չորս պատվիրակներից Մուրատը ծագումով հայ էր[4]:

Ուզուն Հասանի օրոք Աղթամարի կաթողիկոսությունը պահպանեց իր եկեղեցաթեմերը: Ըստ կիսեղծ մի վավերագրի՝ 1474 թ. դրանք տարածվում էին «…ի Շատխոյ մինչև… փոքր գեղորայք, վանորայք և անապատերն...»[5]: Սակայն պետականության բացակայության պայմաններում դրությունը մնում էր ծանր ու օրհասական: 1475 թ. Վանա լճի Կտուց կղզում ձեռագիր օրինակող Խաչատուր գրիչը նշում է՝ «Չգիտեմք, թէ ինչ տի լինի Հայոց ազգիս: Ի գայլոց միջիս շիւարեալ կանք ողորմելի…»[6]: «Ի դառն և ի վշտալից ժամանակի, յորում կամք ընդ հարկի և ընդ ծառայու-

---

[1] *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. 2, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1958, էջ 308:*

[2] *Նկատի ունի քրդերին:*

[3] *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. 2, էջ 312:*

[4] *Ղ և ո ն դ Ա լ ի շ ա ն. Հայ-Վենետ, Վենետիկ, 1896, էջ 187:*

[5] *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. 2, էջ 367, ծան.:*

[6] *Նույն տեղում, էջ 382:*

թեան ազգին նետողաց»[7],– գրում է 1476 թ. Աղթամարում Հայսմավուրք արտագրող գրիչը:

Աղթամարի և նրա թեմերի բնակչության կացությունը շարունակում էր մնալ ծանր նաև 1478 թվականից Աղ-կոյունլուների փադիշահ դարձած Յաղուբ Բեկի օրոք: Թեև 1481 թ. Աղթամարի թեմերի հայ տանուտերերին հաջողվեց միջնորդել փադիշահի առջև փոքր-ինչ թեթևացնել տալով Աղթամարին ենթակա եկեղեցիների հարկերը[8], սակայն դա ևս չփրկեց դրությունը: 1484 թ. Աղթամարի վանքում ձեռագիր արտագրող Կարապետ գրիչն իր թողած հիշատակարանում շեշտում է՝ դաժան ու անհույս ժամանակը, երբ «…երկիր ամենայն երերեալ և տատանեալ կայ ի ձեռաց անօրէն ազգին նետողաց»[9]:

Այդ ծանր ու անհեռանկար թվացող տարիներին Աղթամարի կաթողիկոսության թեմերի բնակչությունը հույս ու սփոփանք էր գտնում նրա հովանու ներքո՝ հոգևորապես մնալով աննվաճ: Օտար ու այլակրոն ցեղերի պարտադրած օրինակարգը չկարողացավ խաթարել ժողովրդի բարոյական ոգին: Ի դեմս Աղթամարի կաթողիկոսության՝ հարատևում էր նրան ապավինած բնակչության նվիրական հույսն առ այն, որ իսպառ չի մարել Հայոց պետականությունը: 1480–1490-ական թվականներին Աղթամար կղզին քրդական ցեղապետ Մելիք Բեկի որդու՝ Ռուստամի իշխանության տակ էր[10]: Ռշտունիքի Շատվան գյուղում 1489 թ. Ատոմ գրչի թողած հիշատակարանում նշվում է, որ այլակրոն իշխանությունները «...բռնադատեն զամենեսեան զմանկունս եկեղեցւոյ դառնալ ի սնոտի և ի պատիր յոյսն իւրեանց… բազում եկեղեցիս տապալեցին և զիսաչ և զԱւետարան նախատեցին»[11]: Աղ-կոյունլուների փադիշահ Բայանդուրը (Յաղուբին հաջորդած), ջանալով հնազանդեցնել քրդական ցեղերին, զորք է հանում նրանց դեմ: Զորքին դիմակայող քուրդ բեկի զորախումբը նահանջում է Ռշտունիք գավառ՝ «...հանդէպ Աղթամարայ, և անդ զօրաժողով առնէր»[12]: Նրան հետապնդող թուրքմեն զորապետն ավերածության է մատնում Վանի գավառը: Հատկապես այնտեղ եղած վանքերն «...առաւել աւերեցին, զի զդարանսն գտին և զգրեանսն և զամենայն սպասք եկեղեցեացն յաւար առին»[13] : Նույն զորապետը թեև չի հասցնում գրավել Աղթամար կղզին, սակայն Աղթամարի աթոռին ենթակա թեմերի բնակչությունը ենթարկվում է բռնությունների, կրում անասելի զրկանքներ: Նրանից հետ չէր մնում վերոնշյալ Ռուստամ Բեկը, որի օրոք՝ «...ի դառն և ի չար ժամանակիս … բռնացեր են ի վերայ Հայոց ազգիս»[14]:

---

[7] *Նույն տեղում, էջ 402:*

[8] *Յուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, կազմեց Ե. Լալայան, Թիֆլիս, 1915, սյունակ 483:*

[9] *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. 3, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1967, էջ 58–59, նաև՝ էջ 85, 111, 121:*

[10] Ш а р а ф - х а н Б и д л и с и. Шараф-Наме, т. 1. М., 1967, с. 158.

[11] *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. 3, էջ 140:*

[12] *Նույն տեղում, էջ 173:*

[13] *Նույն տեղում, էջ 173–174:*

[14] *Գ. Ս ր վ ա ն ձ տ յ ա ն ց. Թորոս Աղբար, հ. 2, Կ. Պոլիս, 1888, էջ 426:*

Վասպուրականցի գրիչները նախկինի պես Աղթամարի կաթողիկոսական աթոռը հիշում են «թագավորական» վերադիրով՝ այդպիսով կամենալով ժողովրդի մեջ սնուցել անկախության գաղափարը: Իհարկե, Աղթամարի կաթողիկոսության գրեթե միակ զենքը հոգևոր-քարոզչական առաքելությունն էր, որի շնորհիվ թեմերի բնակչությունը տոգորվում էր անխառն հավատով ու հույսով, նաև ոչ հեռավոր անցյալի փառալից հիշատակներով, որոնք նրա մեջ պահպանում էին ազգային ոգին, արժանապատվությունն ու հայրենավանդ բարքերը: Աղթամարի թեմերի բնակչությունն ապավինում էր այն հույսին, որ իրեն զորավիգ է նաև Ս. Էջմիածնի Մայր Աթոռը: Դարավերջին պահպանվում էր հոգևոր, կանոնական հաղորդակցությունը Հայոց այդ երկու նվիրական աթոռների միջև: Ուշագրավ է, որ 1496 թ. Աղթամարից «...ամենեցուն միաբանեալ յուղարկեցին ի քաղաքն Վաղարշապատ»: Մայր Աթոռում աղթամարցիներին ընդունում են իբրև «...վաղ ժամանակաց եղբայրների... ըստ բնածին բարի բարուցն իւրեանց»[15]:

1498 թ. Աղ-կոյունլուների փադիշահ Ալվանդը (Ուզուն-Հասանի թոռը) ասպատակում է Վանա լճի ոլորտը, 15 օր թալանում Վան և Ոստան քաղաքները[16]: Ցրտաշունչ ձմռանը նրա զորականները պետական գանձարանը լցնելու համար վասպուրականցի ամեն մի հարկունակ բնակչից կորզում են 2000 դահեկանի չափ հարկագումար՝ չվճարողներին պատուհասելով քստմնելի տանջանքներով: Նրանց «...կախէին և ծեծէին և բանդ արկեալ՝ պահէին յերկաթս մինչեւ չտային զհարկս: Եւ անմեղ քրիստոնեայքն... ոչ կարէին նստել վասն ահի և երկիւղի անօրինացն»[17],– գրում է ժամանակակից հիշատակագիրը: Նույն թվականին քրդերն ասպատակում են Ռշտունիքը՝ մատնելով թալանի ու բռնությունների: Նրանց հրոսակները՝ թվով 200 հոգի, երկու լաստանավով հասնում են Աղթամար կղզի, թալանում Ս. Խաչ վանքը, կաթողիկոսարանը՝ հափշտակելով «... զամենայն ոսկի և զարծաթ, զգանձ և զկումաշ, զգիրք և զԱւետարան, զԱջ և զԽաչ և արարին զԱղթամար որպէս հուրս մրգապահեաց...»[18]:

Ծանր էր նաև Աղթամարի կաթողիկոսության եկեղեցական թեմերի բնակչության վիճակը: Օրհասի մատնվածներից ոմանք ստիպված դիմում էին կրոնափոխության, ինչը, բնականաբար, հանգեցնում էր բնիկ հայ բնակչության նվազմանը: 1498 թ. Աղթամարի Մոկաց թեմի Գինեկանց գյուղում օրինակված ձեռագրի գրիչը նշում է, որ Աղթամարի Ատոմ կաթողիկոսի գահակալման տարիներին՝ 1490-ական թվականներին կղզու բնակիչները գոյատևում էին «...կենօք տառապանօք և բազում պանդխտութեամբ...»[19]: Զդիմանալով բռնություններին ու կեղեքումներին, նրանք հեռանում էին հայրենի տունուտեղից[20]: Ծանր էր նաև Աղթամարի

---

[15] *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. 3, էջ 239:*
[16] *Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, հ. 1, կազմեց Ս. Տեր-Ավետիսյան, Վիեննա, 1970, էջ 117:*
[17] *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. 3, էջ 256:*
[18] *Նույն տեղում, էջ 257–258:*
[19] *Նույն տեղում, էջ 276:*
[20] *Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, այունակ 525–526:*

կաթողիկոսության դրությունը: 1499 թ. Ս. Խաչ վանքը վերստին թալանվում է քրդերի կողմից: «Եւ,– գրում է ժամանակակից գրիչը,– զաւրացան ազգքն մարաց և եկեալ առին զամուր կղզինն Աղթամար և թալանեցին…»[21]:

1500 թ. Աղ-կոյունլուների իշխանությունը բաժանվում է երկու մասի[22]: Թուլացած այդ ցեղախմբին վերջին հարվածը հասցնում է Արդաբիլ քաղաքի թուրքմենների Սեֆյան տոհմը՝ Իսմայիլի գլխավորությամբ, որն իր գերիշխանությանը ենթարկեց նաև Հայաստանը: Մինչ այդ նա աղանդ համարվող շիա դավանանքը հռչակեց պետական կրոն: Նախքան շահ դառնալը, Իսմայիլը և իր հարազատները ուժեղ հալածանքների են ենթարկվում Աղ-կոյունլուների կողմից, ապա ապաստան են գտնում Աղթամար կղզում: Վենետիկցի դիվանագետ Ջիովան Անջիոլելլոն (ով եղել էր Աղ-կոյունլուների փադիշահի մոտ) իր նոթերում գրում է, որ Իսմայիլի հայրը՝ Արդաբիլի շեյխ Հայդարը, 22 հազար զինվորով, շարժվելով դեպի Թավրիզ, փորձում է տապալել Աղ-կոյունլուների Ռուստամ («Ռուստան») փադիշահին: Տեղեկանալով, որ վերջինս 50 հազարանոց զորքը շարժում է իր դեմ, Հայդարը փորձում է հեռանալ, սակայն վրա հասած հակառակորդը պարտության է մատնում և սպանում նրան: Ռուստամը հրամայում է սպանել Հայդարի կնոջը և երեք որդիներին (այդ թվում Իսմայիլին): Սակայն նրանց հաջողվում է խուսափել վտանգից և ապաստան գտնել Աղթամար կղզում, որտեղ, նույն դիվանագետի վկայությամբ, կային «… ավելի քան վեց հարյուր տուն և Սուրբ Խաչ անուն մի եկեղեցի, ուր կան ավելի քան հարյուր վանականներ, որոնք կառավարվում են մի պատրիարքով»[23]:

Իսմայիլն ու եղբայրները երեք տարի թաքնված են մնում Աղթամարում, անշուշտ, հովանավորվելով աղթամարցի միաբանների կողմից: Սակայն Աղ-կոյունլուների փադիշահը տեղեկանում է Աղթամարում նրանց գտնվելու մասին և իր զորականներից մեկին ուղարկում է կղզի՝ նրանց իր մոտ բերելու համար: Աղթամարի միաբանները Իսմայիլին և նրա հարազատներին փրկելու նպատակով նույն զորականից պահանջում են փադիշահի գրավոր կարգադրությունը: Այն ստանալու նպատակով՝ զորականը վերադառնում է Աղ-կոյունլու սուլթանի նստավայր՝ Թավրիզ քաղաք: Բայց մինչև այնտեղ նրա հասնելը, տևում է ավելի քան մեկ շաբաթ: Այդ ընթացքում Աղթամարի միաբանները Իսմայիլին մոր և եղբայրների հետ լաստանավով հասցնում են լճեզերք, ապա տեղափոխում Արցախ[24]:

Այն, որ Աղթամարի հոգևորականները, վտանգելով իրենց կյանքը, մահացու սպառնալիքից փրկել են Իսմայիլին ու նրա հարազատներին, վկայում է նաև Վենետիկից Աղ-կոյունլուների փադիշահ Ուզուն-Հասանի մոտ ուղարկված մեկ այլ դիվանագետ՝ Կատերինո Զենոն՝ իր ուղեգրության մեջ: Նա հաղորդում է, որ Հայդարի որդիներից Իսմայիլը մնում է Աղթա-

---

[21] *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. 3, էջ 276:*

[22] *Գ. Կ ի ր ա կ ո ս յ ա ն. Հայաստանը Լանկ-Թամուրի և թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում (1386–1500 թթ.), Երևան, 1997, էջ 144–145:*

[23] *Հ. Հ ա կ ո բ յ ա ն. Ուղեգրություններ, հ. 1, Երևան, 1932, էջ 271:*

[24] *Նույն տեղում, էջ 272:*

մար կղզում՝ «...բնակեցված հայ քրիստոնյաներից և կոչված Աստվածամոր անունով, ուր նա մնաց չորս տարի, թաքնված մի հայ քահանայի տան□, ապա մեկնեց Արցախ, իսկ այնտեղից՝ Պարսկաստանի Գիլան նահանգ[25]:

Աղթամարում Իսմայիլի թաքնվելու մասին վկայված է նաև Անանուն վաճառականի հուշագրության մեջ: Վերջինս նշում է, որ Հայդարի «...երրորդ որդին (փախավ) մի կղզի՝... Վանի կամ Ուստանի ծովում և պարունակում է հայ քրիստոնյաների մի ավան: Այստեղ այս որդին, Իսմայիլ անունով, որ ազնվական մի պատանի էր՝ տասներեք կամ տասնչորս տարեկան, չորս տարի մնաց մի քահանայի տուն», ապա մեկնեց Գիլան[26]:

Աղթամարում Իսմայիլի ապաստանելու մասին վկայում են նաև ժամանակամերձ հայ պատմագիրները[27]: Զարմանալի է, որ ադրբեջանցի պատմաբան Օ. Էֆենդիևը գրում է, որ Աղթամարում Իսմայիլի գտնվելու մասին որևէ տեղեկություն չկա: Նա իր ասածը հաստատելու համար վկայաբերում է Շարաֆ խան Բիթլիսիին և նշում, որ 1483 թ. Իսմայիլն ու նրա երկու եղբայրները Յաղուբ սուլթանի կողմից բանտարկվել են Ֆարս նահանգի Իստահը բերդում, որը Շիրազից հեռու չէր[28]: Մինչդեռ Շարաֆ խան Բիթլիսին պարզ ձևով գրում է, որ Յաղուբը սկզբում Իսմայիլին ու եղբայրներին «բանտարկեց Աղթամար ամրոցում, ապա տեղափոխեց Իստահր-ի Շիրազ բերդի բանտ»[29]:

Իսմայիլի նկատմամբ աղթամարցի միաբանների ցուցաբերած դրական վերաբերմունքը, անշուշտ, համահունչ էր հետագայում Օսմանյան պետության դեմ Սեֆյան Պարսկաստանի ու քրիստոնյա Եվրոպայի միջև ձևավորված զինադաշինքին: Ինքն Իսմայիլը ևս հակված էր քրիստոնյա երկրների հետ ռազմաքաղաքական մերձեցմանն՝ ընդդեմ Պարսկաստանի հիմնական ախոյան Օսմանյան Թուրքիայի: Դրական էր նրա վերաբերմունքը նաև իրեն ենթակա հայերի նկատմամբ: Այս մասին ուշագրավ տեղեկություններ է պարունակում Վենետիկի հանրապետության մեկ այլ դիվանագետի՝ Ռոտայի հիշատակարանը: Իսմայիլ շահը, գրում է նա, քրիստոնյաներին «...ցույց է տալիս բարյացակամ (վերաբերմունք), որովհետև նա անձեռնմխելի էր թողնում նրանց բոլոր եկեղեցիներն ու մատուռները՝ առանց բռնություն գործադրելու: Եվ տանում էր իր հետ հայոց պատ--րիարքին և մեր հավատին հետևող բազմաթիվ վանականների ու հոգևորականների, դրանով իսկ ակնհայտ դարձնելով մահմեդական օրենքը (սուննիզմը – Մ. Զ.*) հիմնովին ոչնչացնելու նրա ցանկությունը»[30]:*

---

[25] *Նույն տեղում, էջ 273, ծան. 6:*

[26] *Նույն տեղում:*

[27] *Տե՛ս Առաքել Դավրիժեցի. Գիրք պատմությանց, աշխատ. Լ. Խանլարյանի, Երևան, 1990, էջ 440, Զաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն, հ. 1, Վաղարշապատ, 1870, էջ 7, Խաչատուր Աբեղայի Ջուղայեցւոյ Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 96:*

[28] *Տե՛ս* О. Эфендиев. Образование Азербайджанского государства Сефевидов в начале XVI века. Баку, 1961, с. 23.

[29] Шараф-хан Бидлиси. Шараф-Наме, т. 2. М., 1976, с. 145.

[30] *Մ. Զուլալյան. Հայ ժողովրդի XIII–XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գիրք 1: Քաղաքական պատմություն, Երևան, 1990, էջ 25:*

Նկատենք, որ 1512 թ. օրինակված Շարակնոցի հիշատակարանում Աղթամարի կաթողիկոսի հետ հիշատակվում է Շահ Իսմայիլը, նշվում, որ ձեռագիրն արտագրվել է «Յաստուածախնամ կղզիս Աղթամար»[31]:

Աղթամարի կաթողիկոսության եկեղեցական թեմերի բնակչությունը հատկապես շատ էր տուժում թուրք-պարսկական պատերազմներից: 1509 թ. Աղթամարի թեմի Մոկս քաղաքում օրինակված ձեռագրի հիշատակարանում ասվում է, որ «...մեծ պատուհաս է մեր աշխարհի վրա»: Շեշտելով ժողովրդի կրած արհավիրքները՝ գրիչը նշում է, որ պատերազմն «...արար բազում աւեր աշխարհիս. սպանումն և թալան ընդ ամենայն տեղիս... և շատ ոք սովամահ և ձնախեղդ և գազանաբեկ եղեալ...»[32]:

Հարազատ ժողովրդի կրած տառապանքներին անհաղորդ չէր 1512 թվականից Աղթամարի կաթողիկոսի աթոռին բազմած Գրիգորիս Ա. Աղթամարցին, որը հայտնի էր նաև քերթողական ավյունով: Նա, ավելի քան 30 տարի (1512–1544 թթ.) վարելով կաթողիկոսի պաշտոնը, սերտ կապերի մեջ էր իր թեմերի բնակչության հետ, կիսում էր նրա հոգսերը, ջանում ամոքել նրա ցավերը: Ականատես լինելով թուրք-պարսկական պատերազմների հարուցած արհավիրքներին, կրոնական բռնադատումներին՝ Գրիգորիս Աղթամարցին իր տաղերում արտահայտել է իր հոգին ծվատող մտորումները: Տաղերից մեկում նա 1523 թ. առնչությամբ գրում է.

Հազարացիք օրինօք թիւր
Զազգրս խանձեն որպէս ըզհուր[33]:

Մեկ ուրիշ բանաստեղծության մեջ գրում է.

Իմ կեանքս է դառն ու դիժար,
Ողբամ ես միշտ եւ անդադար...[34]

Գրիգորիս Աղթամարցու՝ տաղերգուի և հովվապետի աչքի առջև հոշոտվում էր հայրենի երկիրը, և հարազատ ժողովուրդն ստիպված լքում էր հայրենի եզերքը: 1524 թ. Աղթամարի թեմերից Մոկքի Առինչ գյուղում Ավետարան օրինակող գրիչը գրում է, որ քրդական ցեղերի ասպատակությունների հետևանքով «...ի մտանելն արեգական՝ փախչէինք ի ծերպս վիմաց և ծառատունկս և թուփս անկանէինք, և ի յահէ ոչ /ոք/ կայր ի քուն»: Եվ որ ցեղերից մեկը Մոկքում «...բազում գերի էառ և աւար արարեալ էր և այրեցեալ էր վանքս և անապատս, գիւղս և գաւառս. և բազում քրիստոնեայք սրախողող արարեալ էր»[35]:

Աղթամարի թեմերի բնակչությունը շարունակում էր կորուստներ կրել թուրք-պարսկական զինաբախումների հետևանքով: 1534 թ. Վանում ար-

---

[31] *«Բազմավէպ», 1905, էջ 492:*

[32] *Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. 6332, թ. 228:*

[33] *Մ. Ա վ դ ա լ բ է գ յ ա ն. Գրիգորիս Աղթամարցի. ուսումնասիրություն, քննական բնագրեր և ծանոթագրություններ, Երևան, 1963, էջ 142:*

[34] *Նույն տեղում, էջ 156:*

[35] *Ղ. Ա լ ի շ ա ն. Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 590:*

տագրված Ավետարանի գրիչը հոգու ողբով գրում է. «...տեսաք աչօք մեր զջնջումն և զկործանումն աշխարհիս մեր Վասպուրականի»[36]: Նույն գրիչը շեշտում է, որ 15 հազար վասպուրականցիների սրի են քաշել, «...և երկիրս բնաջինջ արարին. ի յընչից և յապրանաց կողոպուտեցին, այրեցին և քակեցին զբազում եկեղեցիս... գիշերով մտանէին ի տունս և ի փարախս և հանէին զաղջիկն, տղաքն մեր և տանէին և հասանէր ոտք նոցա մինչ յերկիրն Բզնունեացս»[37]: Ըստ Հովհաննես Արճիշեցի մատենագրողի, երբ պարսից զորքը գրավեց Վանի գավառը, Թահմասպ շահը «...դառն տրտմեցաւ ի վերայ աշխարհի աւերման»[38]: Եթե նույնիսկ պարսից շահն է «տրտմել» Վասպուրականի բնակչության կրած արհավիրքների պատճառով, ապա կարելի է գաղափար կազմել ահազարհուր այդ եղելությունների մասին: Բարեբախտաբար, զորականները չեն խուժում Աղթամար կղզի և բավարարվում են Լիմ կղզու գրավմամբ:

Աղթամարի կաթողիկոսության եկեղեցական թեմերի բնակչության նկատմամբ թուրքական իշխանությունները շարունակում էին դաժան վերաբերմունքը: Վասպուրականում իշխող թուրք փաշան ուժից վեր հարկահանությամբ կեղեքում էր բնակչությանը: Զարհուրելի էր հատկապես Ռշտունիքի բնակչության դրությունը: Գավառի քուրդ բեկի զորքը խուժում է այդ գավառ՝ «...սպանանելով և աւերեալ զերկիրն տարաւ ի Վան»: Եվ շարունակում է նույն հիշատակագիրը, «...զաղէտս և զաղաղակս և զկոծն ո՞ կարէ պատմել կամ ընդ գրով արկանել»[39]: Փաշայի հրոսակները ոչնչացնում են նաև հոգևոր արժեքները: «...թալանեցին և գերեցին և շատ գիրք այրեցին և ի ծովն ձգեցին»[40],– վկայում է նույն աղբյուրը:

Աղթամարի թեմերի բնակչությունը շատ է տուժում նաև հետագա տարիներին՝ օսմանյան և սեֆյան զորքերի միջև շարունակվող բախումների պատճառով[41]: Ժամանակի թուրք պատմագիր Փեչևին վկայում է՝ 1554 թ. գարնանը «...անսահման էր նաև թալանված ու կողոպտված բազմատեսակ թանկագին ապրանքների քանակը… Ոչ մի արշավանքում բանակն այս աստիճան հարստություններ ձեռք չի բերել…»[42]: Պարսից պատմագիր Իսկենդեր Մունշիի վկայությամբ 1554 թ. Վանի գավառ թափանցած սեֆյանների զորքը նրա բնակավայրերը մատնում է ավերվածության, հրդեհի ու ամայացման[43]: «Ոչ գիտեմք ինչ տի լինի Հայոց ազգիս»[44],– գրում է 1566 թ. Աղթամարի թեմերից Սպարկերտ գավառակի Ս. Աստվածածին վանքում ընդօրինակված ձեռագրի գրիչը:

---

[36] *Նույն տեղում:*

[37] *Դիվան Հայոց պատմության, հ. Ժ, հրատ. Գ. Ադանյանց, Թիֆլիս, 1912, էջ 19–24:*

[38] *Մանր ժամանակագրություններ, հ. 2, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 231:*

[39] *ՄՄ, ձեռ. 6332, թ. 245:*

[40] *Նույն տեղում:*

[41] *Նույն տեղում, թ. 254–255:*

[42] *Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա, կազմեց Ա. Սաֆրաստյանը, Երևան, 1961, էջ 34–35:*

[43] *Տե՛ս* А. Рахмани. «Тарих-и Алам Арай-и Аббаси» как источник по истории Азербайджана. Баку, 1960, с. 50–51.

[44] *Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, այունակ 658:*

Այսպիսով, ստեղծված պայմաններում ազգային-բարոյական դիմահեղման վտանգն ավելի էր մեծանում՝ սպառնալով ժողովրդի հավաքական գոյությանը: Վասպուրականցին, մոկացին իր հայրենիքում զուրկ էին տիրոջ իրավազորությունից, քանզի օտարն ու այլահավատն էր իշխողը, դրության տերը: Նրանից էր կախված հայ բնակչության բուն գոյությունն ու ապագան: Վասպուրականցիների անկոտրում ոգին խարսխվում էր քրիստոնեության զորավոր ուժի նկատմամբ նրանց տածած աներկբա հավատի և դրան ուղեկցող անմար հույսի վրա:

ЕПАРХИИ АХТАМАРСКОГО КАТОЛИКОСАТА КАК ТЕАТР ВОЕННЫХ СТОЛКНОВЕНИЙ (1470–1560-е годы)

ВРЕЖ ВАРДАНЯН

Р е з ю м е

В 1470-е годы епархии Ахтамарского католикосата находились в сфере господства объединения кочевых племен Ак-коюнлу. Падишах Ак-коюнлу Узун-Хасан, предвидя возможный военный союз между Ак-коюнлу и Венецианской республикой, снисходительно относился к христианам, в том числе и к армянскому населению. Однако положение армян в епархиях Ахтамарского престола было тяжелым. В армянских исторических хрониках отражены невыносимое налоговое бремя местного населения, злоупотребления властей, экономическая разруха. Источники четко фиксируют также факты разрушения церквей и монастырей, вероотступничества, избиения христиан, опустошения поселений.

В создавшихся тяжелых условиях Ахтамарский католикосат как носитель идей канонического права стремился регламентировать правила внутренней жизни церковных учреждений в подвластных ему епархиях. Под духовной эгидой Ахтамарского престола население епархий сохраняло свой национальный облик, вероисповедание, культурные ценности и политические надежды на независимую государственность. Ахтамарский престол сохранял духовные контакты с Эчмиадзинским Католикосатом всех армян.

Положение населения епархий ухудшилось также во время длительных войн между Османской империей и Сефевидской Персией. В этот период Ахтамарский католикосат продолжал выступать защитником христианской веры и прав населения епархий.

THE EPARCHIES OF AGHTAMAR CATHOLICOSATE AS THE STAGE OF ARMED CONFLICTS
(The 1470s–1560s)

VREZH VARDANYAN

S u m m a r y

The nomadic tribes Ak-Koyunlu ruled over the eparchies of Akhtamar Catholicosate in the 1470s. Uzun-Hasan – the patishah of Ak-Koyunlu expected military alliance between Ak-Koyunlu and the Venetian Republic. He indulgently treated Christians, and the Armenian population as well. However, the condition of Armenians in the eparchies of the Armenian throne was hard. Intolerable tax burden of the local population, abuses of power, economic dislocation were reflected in Armenian historical chronicles. Sources fix also facts of destruction of churches and monasteries, apostasy , massacres of Christians, devastation of settlements.

In such hard conditions, the Akhtamar Catholicosate, as the bearer of cannon laws, looked forward to regulating the inner rules of the churches in eparchies. Under the spiritual aegis of Akhtamar throne the population of eparchies kept its national character, religion, cultural values and political hopes of independence. The Akhtamar throne kept its spiritual contacts with the Etchmiadzin Catholicosate of All Armenians.

The condition of population of eparchies worsened also during the continuous wars between the Ottoman Empire and Sefewid Persia. All that time the Akhtamar Catholicosate continued its role of defender of Christianity and the rights of population of eparchies.